

## Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությանը վերաբերող հատուկ հարկային համակարգ

### 1.1 Ընդհանուր նկարագիր

«Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքի շրջանակներում ընկերությունները և ԱԶ-ները կարող են օգտվել հարկերից ազատվելու արտոնությունից, եթե գործունեություն են իրականացնում ստորև բերված սահմանամերձ համայնքերում.

Մարզի անվանում	Համայնք
Արարատ	Երասխ, Պարուլյո Սևակ գյուղեր
Վայոց Ձոր	Խաչիկ, Խնձորուտ, Սերս, Նոր Ազնաբերդ, Բարձրունի
Գեղարքունիք	Ճամբարակ քաղաք, Վահան գյուղ
Տավուշ	Բերդ քաղաք, Ներքին Կարմիր աղբյուր, Ոսկեվան, Չորաթան, Կողբ, Վազաշեն, Բերքաբեր, Չինարի, Արծվաբեր, Ծաղկավան (Իջևանի շրջան), Մոսեսգեղ, Դովեղ, Պառավաքար, Բերդավան, Բարեկամավան, Կոթի, Բաղանիս, Սարիգյուղ, Այգեձոր, Կիրանց, Այգեպար, Սևքար, Այգեհովիտ, Ոսկեպար, Վերին Կարմիր աղբյուր, Ազատամուտ գյուղեր

Վերոնշյալ սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունն է համարվում՝

1. առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքը (առք և վաճառքը)
2. արտադրության կազմակերպումը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է այնուհետև վաճառվում պատրաստի արտադրանքը՝ սահմանամերձ համայնքներում, թե դրանցից դուրս
3. հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, ընդ որում, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը, որը ներառում է նաև խոհարարական արտադրանքի

սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ծառայությունները, մասնավորապես՝ սպասարկումը, մուտքի թույլտվությունը:

*Ուշադրություն. Գրանցված լինել սահմանամերձ համայնքի վարչական սահմաններում պարտադիր չէ սույն օրենքի շրջանակներում համապատասխան հարկային արտոնություններից օգտվելու համար: Անկախ նրանից, թե գրանցել եք ընկերությունը/ԱԶ սահմանամերձ համայնքում, թե դրանից դուրս, կարևոր է, որ այն իր գործունեությունը իրականացնի սահմանամերձ համայնքում (այլ ոչ թե միայն գրանցված լինի), ինչի համար անհրաժեշտ է գրանցման ժամանակ «Գործունեության վայր» բաժնում լրացնել հասցե, որը գտնվում է ցանկում ներառված սահմանամերձ համայնքներից մեկում: Ավելին, արտոնությունից օգտվելու համար հնարավոր է, օրինակ, Երևանում գրանցել ընկերություն/ԱԶ, որը սակայն իր գործունեությունը (օրինակ, արտադրությունը) ծավալելու է Բերդ քաղաքում:*

## 1.2 Հարկային պարտավորություններ

Բոլոր այն ընկերությունները, որոնք իրականացնում են իրենց գործունեությունը Կառավարության կողմից սահմանված սահմանամերձ համայնքների վարչական սահմաններում, ազատվում են այդ գործունեության գծով ՀՀ բյուջե վճարման ենթակա մի շարք պետական հարկերից: Ավելի մանրամասն հարկերի և վճարների աղյուսակը բերված է ստորև:

	Ավելացված արժեքի հարկ	Շահութահարկ	Ակցիզային հարկ	Եկամտային հարկ <sup>1</sup>	Շրջանառության հարկ
ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ	Ապրանքների վաճառքը և ծառայությունների տրամադրումը	Ազատված է բոլոր դեպքերում, բացառությամբ	Վճարվում է ընդհանուր հիմունքներով <sup>2</sup>	ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ պարագայում 5% շահաբաժնի հարկում <sup>3</sup>	Ազատված է

<sup>1</sup> Եկամտային հարկը վերաբերում է ոչ թե բիզնեսին, այլ այդ բիզնեսում ներգրավված աշխատողներին: Տնտեսվարողը, որպես հարկային գործակալ, պարտավոր է հաշվարկել և վճարել իր աշխատողների եկամտային հարկը:

<sup>2</sup> Ակցիզային հարկով հարկման ենթակա կլինեք, եթե զբաղվում եք եթիլային սպիրտի (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքների, գարեջրի, գինու, ծխախոտի (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները), քսայուղի, բենզինի, դիզելային վառելիքի, հում նավթի, նավթամթերքների, նավթային գազերի, սեղմված բնական գազի արտադրությամբ և/կամ ներմուծումով: Հարկի չափերը սահմանվում է ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով՝ <https://bit.ly/38Y2845>

<sup>3</sup> Ենթադրենք ՍՊԸ բաժնետնասերը պատկանում են ձեզ և ձեր ընկերոջը՝ 60% և 40% հարաբերակցությամբ: Ամսվա կտրվածքով Ձեր շահույթը կազմել է 50.000 դրամ: Ըստ ձեր ունեցած շահաբաժնի, շահույթի 30.000

	<p>ազատված է բոլոր դեպքերում, բացառությամբ</p>	<p>ա. առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում</p>		<p>ԱԶ կամ ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ վարձու աշխատող (այդ թվում անհատական ձեռնարկատերն անձամբ, եթե վերջինս գրանցված աշխատող է և ստանում է աշխատավարձ)</p>	
<p>ԱԶ</p>	<p>ա. առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատուների միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք և վաճառքի), հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից, եթե տարեկան շրջանառությունը &gt; 115 մլն. դրամից</p> <p>բ. սկզբային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրությանը &gt; 115 մլն. դրամից</p> <p>բ. սկզբային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրությանը<sup>2</sup></p> <p>ա, բ դեպքերում ԱԱՀն վճարվում է ընդհանուր հիմունքներով 20%</p>	<p>ա. առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատուների միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք և վաճառքի), հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից, եթե տարեկան շրջանառությունը &gt; 115 մլն. դրամից</p> <p>բ. սկզբային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրությանը &gt; 115 մլն. դրամից</p> <p>ա, բ դեպքերում շահութահարկն վճարվում է ընդհանուր հիմունքներով 18%</p>		<p>ԱԶ կամ ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ վարձու աշխատող (այդ թվում անհատական ձեռնարկատերն անձամբ, եթե վերջինս գրանցված աշխատող է և ստանում է աշխատավարձ) ունենալու դեպքում՝ ամսական աշխատավարձի 21 %</p>	

դրամ ձեռք է բաշխվում, 20.000 դրամ ձեռք ընկերոջը: 5% շահաբաժինների հարկումը վերաբերում է հենց այս գումարներին: Որպես հարկային գործակալ, ձեռք անհրաժեշտ կլինի պետական բյուջե վճարել 1500 դրամ (30.000 դրամ շահաբաժնի 5%-ը), ձեռք ընկերոջը՝ 1000 դրամ (20.000 դրամ շահաբաժնի 5%-ը)

	Սոցիալական/կուտակային վճար	Դրոշմանիշային վճար/բանակ
ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ	<p>Վարձու աշխատողի<sup>4</sup></p> <p>&lt; 500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ ամսական 4.5%</p> <p>500.000-1.020.000 դրամ դեպքում՝ ամսական աշխատվարձի 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն,</p> <p>&gt;1.020.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 69500 դրամ</p>	<p>Ամեն վարձու աշխատողի համար կախված աշխատավարձից ամսական՝</p> <p>&lt;100.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 1500 դրամ,</p> <p>100.001-200.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 3000 դրամ</p> <p>200.001-500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 5500 դրամ</p> <p>500.001-1.000.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 8500 դրամ</p> <p>&gt;1.000.001 դրամ աշխատվարձի դեպքում՝ 15.000 դրամ</p>
ԱԶ	<p>ԱԶ-ն իր գծով<sup>4</sup> վճարում է ամսական 5000 դրամ կուտակային վճար:</p> <p>Վարձու աշխատող<sup>4</sup> ունենալու դեպքում աշխատողի հաշվով՝</p> <p>&lt; 500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ ամսական աշխատվարձի 4.5%</p> <p>500.000-1.020.000 դրամ դեպքում՝ ամսական աշխատվարձի 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն,</p> <p>&gt;1.020.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 69.500 դրամ</p>	<p>Սահմանամերձ համայնքում գործունեություն ծավալող ԱԶ-ն իր գծով վճարում է տարեկան 18.000 դրամ միանվագ:</p> <p>Վարձու աշխատող ունենալու դեպքում, ամեն վարձու աշխատողի համար կախված աշխատավարձից ամսական՝</p> <p>&lt;100.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 1500 դրամ,</p> <p>100.001-200.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 3000 դրամ</p> <p>200.001-500.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 5500 դրամ</p> <p>500.001-1.000.000 դրամ աշխատվարձի դեպքում՝ 8500 դրամ</p> <p>&gt;1.000.001 դրամ աշխատվարձի դեպքում՝ 15.000 դրամ</p>

### 1.3 Հարկային ռեժիմի տակ աշխատելու համար դիմումի ներկայացման կարգ

Հարկային արտոնություններից օգտվելու համար որևէ դիմում ներկայացնելու կարիք չկա: Եթե բիզնես գրանցելուց «Գործունեության իրականացման վայր» բաժնում նշել եք Կառավարության կողմից սահմանված սահմանամերձ համայնքներից որևէ մեկը և Ձեր գործունեությունը համապատասխանում է նախորդ բաժնում բերված սահմանմանը, Դուք

<sup>4</sup> Եթե ծնվել է 1974 թվականի հունվարի 1-ից հետո: Միչև 1974 թ. հունվարի 1-ը ծնված լինելու դեպքում որևէ կուտակային վճար չի կատարվում:

ավտոմատ կարող եք օգտվել «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքի շրջանակներում առկա հարկային արտոնություններից:

**Ուշադրություն.** Եթե սույն արտոնության բացակայության դեպքում, դուք պետք է աշխատեիք շրջանառության հարկով հարկման համակարգի ներքո, ապա սույն արտոնությունից օգտվելու համար անհրաժեշտ է նախապես տալ շրջանառության հարկ վճարողի հայտարարություն:

#### **Հավելյալ կարևոր կետեր.**

ա. Եթե ընկերությունը իր հիմնական գործունեությունը իրականացնում է ոչ սահմանամերձ համայնքում, բայց որոշում է զուգահեռ սկսել արտադրություն ցանկում ներառված սահմանամերձ համայնքում, ապա այս դեպքում սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության մասով այն պետք է վարի եկամուտների և ծախսերի առանձնացված հաշվառում: Վերջինիս չափով ընկերության համախառն եկամուտը (ընդհանուր գործունեությունից ստացված ամբողջ եկամուտը) կարող է նվազեցվել:

բ. Եթե սահմանամերձ համայնքում իրականացվող գործունեության ծախսերի որոշ տեսակների մասով հնարավոր չէ վարել առանձնացված հաշվառում, ապա կիրառվում է տեսակարար կշռի սկզբունքը: Օրինակ, եթե ընդհանուր գործունեությունից ստացված ամբողջ եկամուտը կազմել է 200.000.000 դրամ, որից 40%ը բաժին է ընկնում սահմանամերձ համայնքում, իսկ 60%ը ոչ սահմանամերձ համայնքում իրականացվող գործունեությանը, և ընդհանուր տրանսպորտային ծախսերը կազմել են 1.000.000 դրամ, ապա սահմանամերձ համայնքին բաժին ընկնող տրանսպորտային ծախսերը, որոնք ենթակա են հաշվառման կկազմեն 400.000 դրամ:

#### **1.4 Հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային պարտավորությունների կատարման ժամկետներ**

Սույն արտոնության շահառու լինելու դեպքում անհրաժեշտ է հանձնել ՊԵԿ-ի Էլեկտրոնային համակարգում մի շարք հաշվետվություններ, որոնք առկա են <https://file-online.taxservice.am> համակարգի Ձեր անձնական Էջի «Հաշվետվություններ» բաժնում:

Անվանում

Վերջնաժամկետ

189. Եկամտային հարկի հաշվարկ	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը
Շրջանառության հարկ վճարող ԱԶ լինելու դեպքում 240. Հաշվարկ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութարկ վճարողի	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա ապրիլի 20-ը
Շրջանառության հարկ վճարող ԱԶ լինելու դեպքում 244. Հաշվարկ՝ անհատ ձեռնատիրոջ և նոտարի սոցիալական վճարի	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա ապրիլի 20-ը
Շրջանառություն հարկ վճարող լինելու դեպքում 232. Շրջանառության հարկի <sup>5</sup> հաշվարկ <sup>6</sup>	Մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի հաջորդող ամսվա 20-ը

Եթե ակցիզային հարկ վճարող<sup>7</sup> էք, ապա նաև մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը պետք է հանձնեք «203. Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ» հաշվետվությունը՝ լրացնելով միայն հաշվետվության բաժին 2-ը:

Հարկային պարտավորությունների և վճարների մարումը պետք է իրականացվի հետևյալ ժամանակային գրաֆիկով.

Անվանում

Վերջնաժամկետ

Հաշվեհամար

Եկամտային հարկի վճար		
Կենսաթոշակային կուտակային վճար վարձու աշխատողի համար	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը	

<sup>5</sup> Հաշվետվությունում լրացվում է միայն 19-21 տողերից որևէ մեկը՝ ըստ իրականացվող գործունեության:

<sup>6</sup> Սույն հաշվետվության երկրորդ մասում պետք է լրացնեք Ձեր գործունեության տեսակի կոդը, բաժինը, հատվածը, խումբը, դասը և ենթադասը: Վերջինս հասկանալու համար անհրաժեշտ է բեռնել հետևյալ փաստաթուղթը՝ <http://www.arlis.am/Annexes/4/GT30.1-13page1730-2124ink1392.doc>

<sup>7</sup> Ակցիզային հարկով հարկման ենթակա կլինեք, եթե զբաղվում եք Էթիլային սպիրտի (բացառությամբ կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքների, գարեջրի, գինու, ծխախոտի (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարեխաները), քսայուղի, բենզինի, դիզելային վառելիքի, հում նավթի, նավթամթերքների, նավթային գազերի, սեղմված բնական գազի արտադրությամբ և/կամ ներմուծումով: Հարկի չափերը սահմանվում է ՀՀ հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածով՝ <https://bit.ly/38Y2845>

Շրջանառության հարկ վճարող ԱԶԻ դեպքում իր գծով տարեկան կենսաթոշակային կուտակային վճար	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա ապրիլի 20-ը	900008000490
Շրջանառության հարկ վճարող ԱԶԻ դեպքում իր գծով տարեկան շահույթահարկի վճար		
Վարձու աշխատող ունենալու դեպքում դրոշմանիշային վճար	Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 20-ը	9000050011186
ԱԶ լինելու դեպքում նաև տարեկան 18.000 դրամ դրոշմանիշային վճար:	Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա փետրվարի 1-ը	

Ակցիզային հարկ վճարող լինելու դեպքում, ակցիզային հարկի գումարների վճարումը իրականացվում է ըստ գործարքի տեսակի և ապրանքատեսակի՝

Հարկման բազա	Հաշվեհամար
ՀՀ-ում արտադրվող գարեջուր	900005003026
ՀՀ-ում արտադրվող հաղողի և այլ գինիներ	900005003166
ՀՀ-ում արտադրվող փրփրուն գինիներ և գինեկոթեր	900005003174
ՀՀ-ում արտադրվող վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրատներ	900005003182
ՀՀ-ում արտադրվող դ խմորման ենթարկվող այլ ըմպելիքներ (խնձորի սիդր,պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	900005003190
ՀՀ-ում արտադրվող էթիլենային սպիրտ	900005003208
ՀՀ-ում արտադրվող սպիրտային խմիչքներ	900005003216
ՀՀ-ում արտադրվող խաղողի գինու թորումից ստացվող թրմեր, կոնյակ	900005003224
ՀՀ-ում արտադրվող օղի	900005003232
ՀՀ-ում արտադրվող լիկյորներ, մրգօղիներ	900005003240
ՀՀ-ում արտադրվող շամպայն	900005032819
ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	900005003257
ՀՀ-ում արտադրվող շարժիչային յուղեր	900005032918
ՀՀ-ում արտադրվող այլ ակցիզային ապրանքներ	900005003018
ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքներ	900008000490
ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող ապրանքներ	ճշտվում է մաքսային մարմնում ապրանքների ներմուծման ժամանակ